

Ս. Մանուկյան

ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ականավոր գործիչ Ալեքսանդր Ֆևոդուսովիչ Մյասնիկյանը (Ալյոշա, Մարտունի) իր ուսուցչություն-հասարակական և պարտիական-պետական գործունեության ընթացքում շարունակ անդրադարձել է նաև գրականության, կուլտուրայի, լուսավորության, մամուլի հարցերին: Ասքանազ Մոավյանն իր ելույթներից մեկում ասել է. «Ընկ. Մյասնիկյանը չափազանց լայն հետաքրքրություն ունեցող անձնավորություն էր: Նա ոչ միայն փայլուն կերպով տիրապետում էր մարքսիզմին, տնտեսագիտությանը, մարքսիստական փիլիսոփայությանը, այլև մեծ հետաքրքրություն ուներ կուլտուրայի խնդիրների նկատմամբ: Գրական-գեղարվեստական խնդիրները մեծ չափով զրադեցնում էին նրան, նրա ուշադրությունը գրավում էր: Եվ իրոք, դեռևս աշակերտության տարիներից Ալ. Մյասնիկյանը առանձին սեր և հակում է ունեցել դեպի գրականությունը. նրա ուսուցիչները պատմում են, որ ընդունակ մանուկը անհագությամբ կարդում էր հայ և ռուս գրողների երկերը, կրթում իր ճաշակը գեղեցիկ գրականության միջոցով: «Ութ տարեկան մանուկը, — կարդում ենք «Ուսուցչի հիշողություններից» հոդվածում, — ի. Աղայանի ամբողջ «Տորք Անգեղը» անգիր գիտեր»¹: Հետագայում ուսումնասիրելով մարքսիզմի մեծ ուսմունքը և անցնելով ՌՍԴԲԳ շարքերը (1906), Ալ. Մյասնիկյանն իր ուսուցչություն-հասարակական գործունեության ընթացքում, այդ թվում և բանվորական ու ուսանողական խմբակներում կարգացած իր դասախոսությունների ժամանակ (ազգային, ագրարային և այլ հարցերի մասին) հմայում է ունկնդիրներին նաև գրականության և կուլտուրայի վերաբերյալ իր հարուստ ու բազմակողմանի գիտելիքներով, գրական երևույթներին տված իր խոր մեկնաբանություններով: Հին բուլղարիկ և անվանի գրականագետ Ա. Կարինյանը, անդրադառնալով Բաքվում Ալ. Մյասնիկյանի կարգացած դասախոսություններին, գրում է, որ երիտասարդ ուսուցիչները «Շատ լավ ծանոթ էր դեռ այն ժամանակ հայ և ռուս գրականության հետ: Իրեն խոսել պարզ և տրամաբանորեն: Եվ անփոխարինելի դասախոս էր թե՛ բանվորական և թե՛ ուսանողական հավաքույթների մեջ»²: Եվ բոլորովին պատահական չէ, որ Ալ. Մյասնիկյանը հաճախ է հանդես գալիս հենց գրականության և կուլտուրայի հարցերին նվիրված հոդվածներով ու դասախոսություններով:

¹ «Պորհրդային Հայաստան», № 69, 1923:

² «Մարտակոչ», № 67, 1923:

³ «Ալ. Մարտունի — Մյասնիկյան», Նյութեր կենսագրության համար գիրքը, ՀՍՀՖ: Պետական հրատարակչություն, Մոսկվա, 1923, էջ 6:

* * *

Մարքս-լենինյան գրականագիտությունը աճել ու ձևավորվել է բուրժուական ու եկեղեցիոն մտայնություն, բուրժուա-նացիոնալիստական անկումային գրականություն և վերջինիս ապոլոգետների ղեմ մղված սկզբունքային անհաշտ ու հետևողական պայքարում: Լենինյան դիրքերից հանդես գալով ընդդեմ բուրժուական գրողների և գրականագետների, այդ թվում և ընդդեմ հայ սպեցիֆիկների, կոնտրոլյուցիոն դաշնակցականների, բուրժուա-նացիոնալիստական, կղերա-պաշտանողական մտայնության, հայ մարքսիստ-ոկուլուցիոններին Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և մյուսները անխնա մերկացրել են «արվեստը արվեստի համար» արատավոր կոնցեպցիան, հետևողականորեն պաշտպանելով գրականության պարտականություն լենինյան մեծ սկզբունքը:

Այլ Մյասնիկյանը նույնպես հանդես է գալիս իրրև այդ պայքարի մարտիկ, իրրև գրականության պարտականություն լենինյան սկզբունքի եռանդուն պաշտպան: Այս տեսակետից առանձնապես ուշադրավ է ժողովրդագործությունը և նրա սպասարկողները հողվածը: Այստեղ Մյասնիկյանը, Վ. Ի. Լենինի «Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն» ուղենիշ հողվածի ոգով, առաջին հերթին հաստատում է բուրժուական գրականության, մամուլի, կուլտուրայի կախվածությունը փողի քսակից: Նշելով, որ բուրժուազիան հոգուտ իր դասակարգային նվաճումների՝ ձեռնում է մեկենաս, բարերար՝ «մի չնչին մասը իր կողոպտած հավելյալ արժեքից շարտելով» գրականության մարդու իր ապոլոգետների երեսին, Մյասնիկյանը գրում է. «Բուրժուական սեփականությունից թափված այդ չնչին գումարը ավանս է կազմում այն բանի, որ մամուլ, թատրոն, դպրոց, գիտություն նրա (բուրժուազիայի — Ս. Մ.) ներկայացուցչի առաջ խոնկ են ծխում, նրա ստրուկները դառնում¹, կոնկրետացնելով իր խոսքը, Մյասնիկյանը մատնացուց է անում հայ բուրժուա-նացիոնալիստական մամուլը, մասնավորապես դաշնակցական «Հորիզոն» թերթը, որի էջերում շուտը գովեստներ էին արվում «ազգի բարերարների», Մանթաշյանի նման կապիտալիստների հասցեին: Բնիշ ընդլիժ ու բովանդակություն կարող էր ունենալ և ուներ այդ կաշառված գրականությունը: Այս հարցի պատասխանը Մյասնիկյանը տալիս է իր «Կրթնացումը» քաղաքական նպատակասլաց հողվածում: «Ահա գրականությունը, — գրում է նա իր հողվածում, — Սանին, Պինկերտոն, Վեյնինգեր և մադոխիդ մի կողմից, աստվածախույզներ ու միստիկներ, կրոնական պսիսոպատներ ու Մերեժկովսկի — Գեպպեուս — Խիլոսոֆյան ստորարժեք քննադատներ մյուս կողմից²: Ցարիդմի և բուրժուազիայի կողմից ոգեշնչվող հիշյալ ու եկեղեցի, սև-հարյուրյակային գրականության ու գրաքննադատության ներկայացուցիչների նպատակն էր թունավորել մոսսանների գիտակցությունը, նրանց սնել ու եկեղեցիայի ոգով, հեռու պահել ուսուցիչայից: Այստեղից հասկանալի է, թե որքան սեղմ, բայց բովանդակալից է Այ. Մյասնիկյանի ընտրված գիրքը: Անխնա մերկացնելով բուրժուական կաշառված գրականությունը, Այ. Մյասնիկյանն իր

¹ «Նոր կյանք», Բաքու, 1912, № 3-4:

² «Մշակ», № 38, 1913:

նույն հոգվածում արձանագրում է, որ ստույլալիսյան մոայլ ունակցիայի հետ միասին, տեղի է տալիս նաև այդ սե-հարյուրյակային գրականությունը: Վճատ գրականությունը, — գրում է նա, — տեղի է տալիս առողջ գրականության, նորից հրապարակի վրա է Մաքսիմ Գորկին, որին դեռ երեկ հիմարների բռնակը վախճանի երգ էր ասում: Այսօր քննադատական ցինիզմին փոխարինում է պրոգրեսիվ քննադատությունը¹, «Առողջ գրականությունը» կապելով պրոլետարական արվեստի խոշորագույն ներկայացուցիչ Ա. Մ. Գորկու անվան հետ, որին, ինչպես հայտնի է, շատ բարձր էին գնահատում թե՛ Վ. Ի. Լենինը, թե՛ ղինակիցները, այդ թվում և Շահումյանն ու Սպանդարյանը, Ալ. Մյասնիկյանը լիբիկական ջերմությամբ գրում է.

«Նորից մեր անձկալի գարունն է գալիս.

սրա ծիծեռնակը, մեր երկրի դեմոկրատ գրող Մաքսիմ Գորկին, կրկին մեզ մոտ է՝ մեզ հետ գործելու, մեզ հետ ապրելու համար:

Անուշտ, այդ սիրուն ծիծեռնակին կհաջորդեն երկրորդը, երրորդը, մի շարք ծիծեռնակներ և մեր երկիրը նորից կլցվի այդ կենսաբեր թռչուններով, որոնք ուրախ ճովողյունով պար բռնած մեծ գործի շուրջը կհանեն նրան լայն ու լուսավոր ասպարեզը:

Եվ այդ այդպես կլինի»²,


Ինչպես տեսնում ենք, Ալ. Մյասնիկյանը, Լենինի հետևություններով, գրականությունը դիտում է իրրև «համապրոլետարական գործի մի մասը», շեշտում է նրա նշանակալից դերը պրոլետարիատի ուժերը մորիլիզացնելու և ռևոլյուցիայի հաղթանակի գործում:

Մյուս կարևոր հարցը, որ շոշափում է Մյասնիկյանը նախահոկտեմբերյան շրջանի իր հոգվածներում, դա կլասիկ ժառանգության գնահատման խնդիրն է: Այս իմաստով ուշագրավ է «Երկու կուլտուրական տոն» հոգվածը, որ գրված է հայ գրերի գյուտի 1500-ամյակի և տպագրության 400-ամյակի կապակցությամբ: Մյասնիկյանը շատ բարձր է գնահատում հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցին, նրան համարելով «հանճարեղ գլուխներից մեկը» հայ կուլտուրայի պատմության մեջ, նա հպարտության զգացումով է գրում, որ դեռևս 5-րդ դարում ստեղծված է «հարուստ ու բեղուն գրականություն», մեծարում է, իր բառերով ասած՝ «հինգերորդ դարի փայլուն ու սրամիտ գրող» Եղնիկ Կողբացուն, մյուս կողմից քննադատության է ենթարկում այդ հարուստ կուլտուրայի գնահատման հարցում եղած ողբալի վիճակը: Նշելով, որ անմխիթար դրություն մեջ է հայ գրականության, լեզվաբանության, բանասիրության ուսումնասիրությունը, նա գրում է. «Մինչև այսօր հայ միտքը, հայ գրականությունը քննվել են սոսկ լեզվաբանական ու բանասիրական տեսակետից. այնտեղ բացակայել է հասարակական ու պատմական ուսումնասիրությունը», այնինչ «առանց հասարակական կոչման չկա գեղարվեստ»³, գրականությունը, լինելով հասարակական կյանքի արտացոլումը, ինքն էլ հասարակական երևույթ է, ուստի անտեսել նրա հասարակական-պատմական կողմը, նշանակում է լուրջ սխալ թույլ տալ: Այստեղից միանգամայն հասկանալի է, թե ինչու ինքը՝ Մյաս-

¹ «Մշակ», № 3, 1913.

² Նույն տեղում:

³ «Մշակ», № 268, 1913.



նիկյանը հայ գրողներին նվիրված իր հոդվածներում առանձնապես կանգ է առնում նրանց ստեղծագործության հասարակական արժեքի վրա, իհարկե, չանտեսելով նաև գեղարվեստական կողմը։ Դեռևս 1910 թ. գրած իր «Մի- քայել Նալբանդյան» ընդարձակ հոդվածում Ալ. Մյասնիկյանն սկզբից ևեթ գնում է այն հարցը, որ լիբերալ քննադատությունը «տարօրինակ թյուրի- մացությամբ» մերժում է խոշոր հայ գրողի և մտածողի ստեղծագործու- թյան հասարակական արժանիքները։ «Նոր ժամանակների ամենաառաջնա- կարգ գեմքը հերքվում է որպես հրապարակախոս», — գրում է Մյասնիկյանը։ Մինչդեռ Նալբանդյանը, ինչպես մանրամասն կերպով ցույց է տալիս հե- տադոտողը, նաև առաջնակարգ հրապարակախոս է, կրթոտ ու բազմակողմա- նի հասարակական գործիչ։ Լինելով Բելինսկու, Դերգենի, Չերնիշևսկու և առ- հասարակ «վաթսուներկու թվականների ուսական մտքի առաջնակարգ ներ- կայացուցիչներին» գաղափարակիցն ու զինակիցը, Միք. Նալբանդյանը հան- դես է եկել իրրե գրող, հրապարակախոս, քննադատ, փիլիսոփա և բոլոր գեպքերում էլ անհաշտ պայքար է մղել հետամնացության, բռնության, սո- ցիալ-քաղաքական և ազգային ճնշումների դեմ։ Ահա թե ինչու նրա առա- ջադրմական, պայծառ մտքերը «մինչ այսօր թարմ են մեզ համար և մենք պետք է կարողանանք Նալբանդյանին հատկացնել իր արժանի տեղը»։ «Բնիկ հայ բուրժուազիան», — շարունակում է Մյասնիկյանը, — չունի նրա հետ որևէ առնչություն։ Նալբանդյանը չի կարող հաշվվել լիբերալների կամ վերածը- նիչների զինակիցը։ Որքան մեզ հայտնի է, հայ հասարակական մտքի պատմության մեջ առաջին անգամ այստեղ է, Մյասնիկյանի այս հոդվա- ծում, որ Նալբանդյանը որոշակիորեն սահմանազատվում է լիբերալներից, ամենայն վճռականությամբ շեղտվում է, որ նա ոչ մի առնչություն չունի բուրժուազիայի հետ։ Այս մասին առավել հանգամանորեն Մյասնիկյանը խոսում է իր հոդվածի վերամշակված հրատարակության մեջ (1919)։

Ինելով մարքսիստական Նալբանդյանագիտության սկիզբը, Ալ. Մյաս- նիկյանը հանգամանորեն ուսումնասիրում է Նալբանդյանի ոչ միայն տպա- գրված աշխատությունները, այլև ծանոթանում է որոշ արխիվային փաս- տաթղթերի հետ, մասնավորապես բանտից գրած մի քանի նամակներին։ Ջրավարարվելով ցենզուրական կրճատումներով վերահրապարակված երկե- րով, նա ձեռք է բերում առաջին, համեմատաբար լրիվ, հրատարակություն- ները, իր աշխատանքը առանձին գրքով հրատարակելիս կատարում է մի շարք փոփոխություններ ու լրացումներ։ Այս բոլորը վկայում են Մյասնիկ- յանի լսելի ու բարեխիղճ աշխատանքը ուսումնասիրող նյութի վրա։ Նույն պիսի բարեխիղճության արդյունք է նաև «Հովհ. Հովհաննիսյանի և Ալ. Մա- տուրյանի բանաստեղծությունների հասարակական արժեքը» ծավալուն հոդվածը։ Այստեղ ևս Մյասնիկյանի ուշագրության կենտրոնում ուսումնա- սիրվող գրողների ստեղծագործության հասարակական նշանակության հարցն է, այն միջավայրն ու պայմանները, որտեղ ապրել ու ստեղծագործել են նրանք, նրանց կապերը նախորդների հետ։ Տալով ժամանակի հասարակա- կան երևույթների բնութագիրը, Մյասնիկյանը այդ փոփոխվող մանրամասն ցույց է տալիս այն հիմնական մոտիվները, որ երգել են բանաստեղծները, վեր է հանում նրանց արտահայտած գաղափարների պրոգրեսիվ կողմերն ու հակասությունները։

Չանդրադառնալով նախառեկոյուցիոն շրջանի մյուս հոդվածներին,

հարկ ենք համարում նշել Վեպրյանին հարցի լուծման մասին՝ աշխատությունը, որտեղ Մյասնիկյանը ոչ միայն լենինյան դիրքերից քննադատում է աղգային հարցի մասին եղած ոչ մարքսիստական տեսակետները և պաշտպանում աղգերի ինքնորոշման իրավունքի ձևակերպումը Կոմունիստական պարտիայի ծրագրում, այլև շոշափում է լեզվի, գաղտցների, մամուլի, թատրոնի, գրականության հարցերը։ Նա համոզիչ կերպով ցույց է տալիս, որ միմիայն սոցիալիստական ուղղությամբ հաղթանակի միջոցով հնարավոր է լուծել թե՛ աղգային հարցը, որը նրա բնորոշումով՝ «գոսպարագային կոմի» մի արտահայտությունն է¹, թե՛ պայմաններ ստեղծել կուլտուրայի ու գրականության ազատ ու անկաշկանդ զարգացման համար։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ուղյուցիայի հաղթանակից հետո Այլ Մյասնիկյանը իր պարտիական ու պետական ղեկավար աշխատանքներին թացքում, շարունակ անդրադառնում է գրականության ու կուլտուրայի զարգացման կենսական ու հրատապ խնդիրներին։ Ըստ որում ուշագրավ է Այլ Մյասնիկյանի գրականագիտական հայացքների հետագա զարգացումն ու խորացումը։ Ցայտուն օրինակ է Վրական քննադատության մեթոդի մասին հոդվածը։ Վրական-քննադատությունը դիտելով իբրև նոր կուլտուրա և գրականություն ստեղծելու գործին ակտիվորեն օժանդակող կարևոր միջոց, Այլ Մյասնիկյանն իր հոդվածում մի անգամ ևս, ըստ որում ավելի խոր և բազմակողմանի կերպով, անդրադառնում է այն էսթետներին, մոգեոն գեղարվեստասերներին ու գեղարվեստագետներին², որոնք հանդես էին գալիս ի պաշտպանություն Վարվեստը արվեստի համար՝ կոնցեպցիայի և պահանջում գեղարվեստական երկը քննել Վրական նրա գեղարվեստականության կողմից, մի կողմ թողնելով նրա հասարակական նշանակությունը։ Ելնելով մարքս-լենինյան արտացոլման տեսությունից, Այլ Մյասնիկյանը հաստատում է, որ գեղարվեստը կյանքի արտացոլումն է։ Վերադառնալով ևս գեղարվեստի համար չէ, այլ, ընդհակառակը գեղարվեստը—գա ինքը կյանքն է, հասարակությունն է, նա մարդկանց ու երկրիս համար է³։ Այս սկզբունքային դիրքերից էլ Մյասնիկյանը գրում է. «Ինչու են մարդիկ կարծում, թե գեղարվեստին չի կարելի մոտենալ հասարակագիտական տեսակետից... ընդհակառակը, մեզ թվում է սոցիոլոգիան այստեղ ամենից շատ գործ ունի կատարելու... Երևի մեր էսթետները գեղարվեստի սոցիոլոգիական ուսումնասիրության հարցը խառնում են գեղարվեստական կամ գրական քննադատության սոցիոլոգիական ուղղության հետ, և նրանք, երևի, դեմ լինելով այդ ուղղության, հայտարարում են, այսպես ասված, գեղարվեստը գեղարվեստի համար գրական քննադատության նշանաբանը⁴։ Մարքսիստական գրական քննադատությունը, ըստ Մյասնիկյանի, ունի մեկ հիմնական ղեկավար մեթոդ. Վեպրյանի մեթոդը — ժամանակակից մատերիալիզմն է տալիս, որի երկու գլխավոր հատկություններն են օբյեկտիվիզմ և դիալեկտիկան⁵։ Բացառելով օբյեկտիվիզմի և դիալեկտիկայի էությունը, Մյաս-

¹ «Մշակ», № 253, 1913;

² «Նոր աշխարհ», № 1, 1922;

³ Նույն տեղում։

⁴ Նույն տեղում։

նիկյանը եզրակացնում է, որ գեղարվեստական երկը վերլուծել ու գնահատել՝ նկատի ունենալով միայն նրա արվեստը՝ վերջինս կտրելով երկի գաղափարական բովանդակությունից և հասարակական նշանակությունից, այսինքն՝ պաշտպանել «արվեստը արվեստի համար» ռեակցիոն «թեորիան», նշանակում է մեղանշել գիտության առաջ, ծառայել բուրժուազիայի շահերին. «Այդօրինակ գրական քննադատության դեմ է արդի առաջադիմությունը, նա բուրժուազիայի սպասավորն է, նա ռեակցիայի հլու գործիքն է»¹։ Հիշենք, որ 1910 թվականին ևս Ալ. Մյասնիկյանը բարձրացրել է գրական քննադատության սպեցիֆիկումի հարցը։ «Ինչպես են գրվում ռեցենզիաները մեզանում» հոդվածում, բանավեճ մղելով Creado-ի դեմ (թերևս չիմանալով, որ այդ անվան տակ թաքնված էր Հակոբ Հակոբյանը և սխալմամբ Շ. Կուրդինյանին համարելով «առաջին տեղում կանգնած» իրրև պրոլետարական քնարերգու), Մյասնիկյանը գրում է. «Քննադատության յուրաքանչյուր առարկա ենթակա է քննադատության որոշ ձևի... Ի՞նչ է նշանակում պոեզիան քննել միմիայն հասարակագիտական կամ միմիայն գեղարվեստական տեսակետից, այդպիսի բան չի կարող լինել... մեկով հետազոտելիս, մյուսը աչքաթող անել չի կարելի։ Բանաստեղծությունը անհնար է ենթարկել այնպիսի վերլուծության, ինչպես այդ արվում է գիտական խնդիրների նկատմամբ»²։ Ակնհայտ է, որ այս ճիշտ հարցադրումն է իր հետագա զարգացումն ստանում «Գրական քննադատության մեթոդի մասին» հոդվածում, որտեղ, բացի արդեն նշած հարցերից, Ալ. Մյասնիկյանը պահանջում է, որ գրական քննադատությունը լինի ոչ միայն օբյեկտիվ, այլև մարտնչող, երևույթների ակտիվորեն միջամտող, իր բառերով ասած՝ «էսթետիկական ռեակցիայի դիմակը» պատռող, եվ ինքը առաջիններից մեկն է իր հոդվածում դատափետում ռեակցիոն էսթետներին, «մեր գրական միմոսներին», որոնք ըստ նրա՝ «Գեղարվեստի ասպարեզում բուրժուազիայի ադենտները պետք է համարվեն»³։

Նոր, սովետական գրականության զարգացման հարցերն են շոշափվում Ալ. Մյասնիկյանի՝ «Մուրճ» ամսագրի № 1-ի առիթով գրած հոդվածում։

Վերջինիս կապակցությամբ, ինչպես հայտնի է, ժամանակին գրվեցին դիսկուսիոն հոդվածներ, որոնց մեջ հատկապես վիճարկվում էր Մյասնիկյանի այն թեզը, թե սովետահայ գրողները առաջին հերթին պետք է արտացոլեն հայ իրականության երևույթները, հետեւն մեր մթնոլորտին, Պետք է ասել, որ Մյասնիկյանի հոդվածում կան առանձին ձևակերպումներ ու մտքեր, որոնցից և կառչում էին վիճողները։ Սակայն, հարցին ըստ էության մոտենալիս, ակնհայտ է դառնում, որ նա բոլորովին էլ կողմնակից, չէ ազգային կեղևի մեջ սահմանափակվելուն. նախ՝ Մյասնիկյանը նշում է, որ ինքը հանդես չի գալիս իբրև գիրեկտիվներ տվող, իր տեսակետը պարտադիր չի համարում, այլ որպես սովորական մի ընթերցող շարագրում է իր կարծիքը, թվում է մի շարք թեմաներ, որոնց մշակումը համարում է կենսականորեն անհրաժեշտ։ Ի պատիվ Մյասնիկյանի պետք է ասել, որ հենց նրա նշած երևույթներն էլ հետագայում դարձան սովետահայ գրակա-

¹ «Նոր աշխարհ», № 1, 1922,

² «Մշակ», № 28, 1910,

³ «Նոր աշխարհ», № 1, 1922,

նության հիմնական թեմաները: Երկրորդ կարևոր մոմենտն այն է, որ առաջ քաշելով հայ իրականության արտացոլման խնդիրը, Մյասնիկյանն էապես նկատի է առնում նաև այդ հարցի քաղաքական նշանակությունը: Չպետք է մոռանալ, որ առանձնապես 20-ական թվականներին, երկրից վոնդված դաշնակ-ավանտյուրիստները ստահոգ լուրեր էին տարածում հայ ժողովրդին սպառնացող կարծեցյալ վտանգի, ազգային քայքայման, ոչնչացման մասին: Այդ պայմաններում Ալ. Մյասնիկյանը ձգտում էր այն բանին, որ մեր գրողները իրենց գեղարվեստական երկերով հերքեն այդ բարբառանքները, ցույց տան այն իրողությունը, որ հայ ժողովուրդը միայն Սովետական իշխանության շնորհիվ է ձեռք բերել ազգային վերածննդի ու խաղաղ շինարարության լայն հնարավորություններ և իր հերոսական աշխատանքով կերտում է նոր կյանք ու երջանիկ ապագա: Պատահական չէ, որ դադութահայ աշխատավորության համար գրած իր գրքի մեջ, Սփյուռքի հայերին հանգամանորեն ծանոթացնելով Սովետական Հայաստանի կյանքին, Մյասնիկյանը դա համարում է անհրաժեշտ հատկապես այն «թերահավատների» համար, որոնք «թյուր ինֆորմացիայի դո՛ւ են մնացել մինչև այժմ»¹: Պարզ է, որ նա գեղարվեստական գրականությունը դիտում է իբրև ճշմարիտ ինֆորմացիայի լավագույն աղբյուրներից մեկը, ուստի և գնահատում է հայ աշխատավորների կյանքին ու աշխատանքին նվիրված նույնիսկ այնպիսի գործեր, որոնք գեղարվեստական առումով քննադատության չեն դիմանում: Մյասնիկյանը ընդգծել էր դեմ չէ սովետական մյուս ռեսպուբլիկաների և միջազգային կյանքի երևույթներ պատկերելուն, ինչպես կարծել են նրա հոգվածի դեմ արտահայտվողները: Լինելով լենինյան տիպի ինտերնացիոնալիստ, «ազգային հաշտության դրոշակակիր» (ինչպես բնութագրել է Օրջոնիկիձեն), Մյասնիկյանն իր հոգվածում վերին աստիճանի հրատապ և շնորհակալ թեմա է համարում նաև ժողովուրդների բարեկամությունը, ինչպես ինքն է ասում՝ «ազգային խնդիրը», այդ թվում հայ-ադրբեջանական և հայ-թյուրքական հարաբերությունները, ուստի մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարը Սովետական իշխանության համար և այլն: Ակնհայտ է, որ Մյասնիկյանը հրատապ է համարում ինքնուրույն և բարձրորակ գրականություն ստեղծելու խնդիրը, իսկ գրահամար նյութը առատ է նաև մեր իրականության մեջ, այս մասին նա գրում է. «Հայ աշխատավորը այսօր գերմարդկային ճիգ է թափում իր խորհրդային երկիրը միանգամայն շենացնելու: Եվ ինչպիսի՜ ելևէջներ ունի այդ աշխատանքը, և ի՜նչ ձևեր է նա կրում, և ի՜նչ տեսակ օրինակներ է նա տալիս: Ինչու, միթե այս ամենը չի հարստացնի մեր գրականությունը, նա կհարստացնի, եթե միայն մենք հետևենք մեր մթնոլորտին, մեր իրականությանը, ապրենք նրանով...»²: Մարքսիստ գրականագետի այս դիտողությունը պահում է իր ուժը նաև մեր օրերում:

Վերջապես, առաջին պլանի վրա քաշելով մեր ռեսպուբլիկայի կյանքը պատկերելու հարցը, Մյասնիկյանը հետապնդում է ժողովրդին իր սեփական փորձի վրա դաստիարակելու, նրան կրթելու, լուսավորելու նպատակը:

¹ Ալ. Մասնիկ, Դադութահայ աշխատավորության, Նյու-Յորք, 1923, էջ 7:

² «խորհրդային Հայաստան», № 168, 1922:

նա գտնում է, որ գրողները պարտավոր են ակտիվորեն միջամտել հնի փլուզման ու նորի կառուցման մեծ պրոցեսին. գեղարվեստորեն ընդհանրացնեն և իմաստավորեն ժողովրդի փորձը, այնպես որ մարդիկ գրականություն մեջ, ինչպես հայելու, տեսնեն իրենց պատկերը՝ լավի ու առաջավորը անընդհատ առաջ մղելու և հին ու հետաձուլող արմատախիլ անելու համար: Ահա թե ինչու գրեթե իր բոլոր ելույթների ու ղեկուցումների մեջ ես նա շարունակ խոսում է այն մասին, որ ցարիզմի և դաշնակցական ավանսյուրիստների մեղքով խավարի ու հետաձուլության մեջ խարխալող մեր երկիրը այդ տխուր փրճակից դուրս բերելու համար առաջնահերթ խնդիր է մորի-լիզացնել բոլոր ուժերը և տնտեսական, շինարարական աշխատանքներին ղուգրնթաց, դարկ տալ նաև գիտության, լուսավորության, արվեստի, կուլտուրայի, գրականության զարգացմանը, աճեցնել նոր, սովետական ինտելիգենցիա: «Լուսավորության գործը թողած, միմիայն տնտեսական և այլ խնդիրներով զբաղվել չենք կարող: Մեր հաղթությունը կրթությունից, գիտակցությունից և դաստիարակությունից է կախված», — գրում է Մյասնիկյանը:

Այլ Մյասնիկյանը եղել է այն հաստատ համոզմունքին, որ «եթե թերթը ու գիրքը ժողովրդական լայն մասսաների սեփականությունը չեն դառնում, ապա դրանց հրատարակելու միտք չունի»²: Հենց այս գիրքերից է նա գնահատում մի շարք թերթեր և գեղարվեստական երկեր: Ողջունելով վրացական «Գոմունիստ», ադրբեջանական «Շարկ Կադրնի», հայկական «Խորհրդային Հայաստան» և «Ամանգարդ», Ադրբեջանում լույս տեսնող հայերեն «Կոմունիստ» թերթերի հորելյանական համարները, Մյասնիկյանը առաջին հերթին բարձր է գնահատում նրանց սերտ կապը մասսաների հետ, նրանց կատարած կազմակերպչական ու դաստիարակչական խոշոր աշխատանքը:

Բրբե ժողովրդի իսկական շահերի պաշտպան էլ Մյասնիկյանի կողմից գնահատվում է անվանի րանաստեղծ Վահան Տերյանը: Մյասնիկյանի րնորոշմամբ «խոշոր հայ գրողի ու խիղախ մարտիկի»³ ստեղծագործության ուժն այն է, որ նա սերտորեն կապված է եղել հարազատ ժողովրդի հետ, քայլելով նրա լավագույն զավակների առաջավոր շարքերում, թե իր պոեզիայով, թե հասարակական գործունեությամբ նա մեծագույն ծառայություն է մատուցել հայ ժողովրդին, նրա մտավոր զարգացմանն ու վերջնական ազատագրմանը: Ինդուլցիայի հաղթանակին մատուցած անգնահատելի ծառայության մեջ է, րստ Մյասնիկյանի, հայ պրոլետարական գրականության վետերան Հակոբ Հակոբյանի պոեզիայի պատմական նշանակությունը: Բանաստեղծի գրական գործունեության 30-ամյա հորելյանին նվիրված նիստում ունեցած իր ելույթում Մյասնիկյանը ասում է. «Բանաստեղծ Հ. Հակոբյանը խոշոր դեր է կատարել հեղափոխության համար՝ իր գրական գործունեությամբ: Ծիշտ է, հայ իրականության մեջ Հակոբյանի րանաստեղծությունները ընդունելություն չգտան հայ էսթետների կողմից, րայց նա իր արժանի տեղը գրավեց խորհրդային իրավակարգի

¹ Այլ. Մասունի, Խորհրդային Հայաստանի ուղին, 1923, էջ 13:

² «Մարտակոչ», № 233, 1923:

³ Տես Վ. Ի. Լևինի «Պետություն և հեղափոխություն» գրքի հայերեն առաջին թարգմանությունը (Թարգ. Վ. Տերյան) կցված վերջաբանը (1921):

մեջ¹, Մյասնիկյանը հաստատում է, որ Հակոբյանը «իր հեղափոխական երգերով դաստիարակել է հեղափոխական բանվորությանը և նրանց մեջ վառել հեղափոխական ոգի: Այս տեսակետից Հակոբյանը մեծ գործ է կատարել և արսանի է բանվորության և նրա պաշտպան խավերի հարգանքին ու պատվին... Մենք ողջունում ենք Հ. Հակոբյանի հաղթանակը, որպես ընդհանուր պրոլետարիատի հաղթանակ»: Ակնհայտ է, որ Մյասնիկյանը վերանայում է իր այն տեսակետը, թե մեր գեղեցիկ գրականության մեջ Շ. Կուրդինյանը առաջին տեղումն է կանգնած իրրև պրոլետարական քնարերգու:

Ինչպես նախառեկոյություն շրջանում, այնպես էլ հատկապես Սովետական իշխանության տարիներին գրած իր հոգիվածներում Ալ. Մյասնիկյանը նշանակալից տեղ է հատկացնում անցյալի գրական-կուլտուրական ժառանգության լավագույն տրագիցիաների պահպանման, դարգացման, յուրացման հարցերին: Այդ խնդիրը էական էր, մանավանդ 20-ական թվականներին, երբ, ինչպես հայտնի է, գործում էր կլասիկ ժառանգությունից հրաժարվելու, անցյալի կուլտուրան հիմնովին ժխտելու ոռպպական տենդենցը: Ուղեցույց ունենալով լենինյան դրույթը այն մասին, որ առանց յուրացնելու անցյալի հարուստ մշակույթը, անհնար է կերտել նոր կուլտուրա, Մյասնիկյանը իր ջերմ խոսքն է ասում հայ կլասիկ գրողներ Միք. Նալբանդյանի, Հովհ. Թումանյանի և ուրիշների մասին, նշում նրանց ստեղծած հարուստ արժեքների ակտուալ խոշոր նշանակությունը: Մենք արդեն խոսել ենք «Միքայել Նալբանդյան» աշխատության մասին, որի վերամշակված հրատարակությունը լուրջ ներգրում է նալբանդյանագիտության մեջ: Այստեղ նշենք «Միքայել Նալբանդյանը և հայ ինտելիգենցիան» հոդվածը, որը անցյալի ժառանգության մարքսիստական գնահատման ցայտուն օրինակ է: Պաշտպանելով մեծ գրողին ու հրապարակախոսին դաշնակցականների «որդեգրումից», նրան վճռականորեն սահմանադատելով լիբերալներից և այն բոլոր «հեղափոխականներից», որոնք «արագորեն անհետանում են կեղտոտ փրփուրի նման», Մյասնիկյանը գրում է. «Ահա մի լուսավոր դեմք, նա տասնյակ տարիների, երկար ժամտնակների միջով ու հարյուրավոր, հազարավոր մեղանական գլուխների վրայով մեզ է նայում եմիանում է արդի մարտնչող բանվորությանը, նրան սատարող աղքատ գյուղացիությանը»², Մյասնիկյանը ցույց է տալիս, որ մեղ համար թանկ են «իր մտքով ու գործերով հեղափոխական», «հայ պրոլետարիատի և գյուղացիության բարեկամը» Մ. Նալբանդյանի տրագիցիաները:

Անդրադառնալով հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանին, հանգամանորեն վերլուծելով ու գնահատելով նրա ստեղծագործությունները, վեր հանելով արժանիքներն ու առանձին հակասությունները, Ալ. Մյասնիկյանը նրան բնութագրում է իրրև «գեղունակ երգիչ, մինչայսօրյա հայ գրականության խոշորագույն դեմքը», խորին համոզվածությամբ հաստատելով, որ նրա «անմահ գրվածքները... սերունդները կկարդան գեղարվեստական հաճույքով, մեծ հետաքրքրությամբ ու կատարյալ բավականու-

¹ «Մարտակոչ», № 235, 1923:

² Նույն տեղում:

³ «Պայքար», № 12—13, 1923:

թյամբ¹։ Նույն միտքն է զարգացնում նա բանաստեղծի մահվան առթիվ կազմակերպված սգո հանդեսում ունեցած իր ելույթում²։ Ալ. Մյասնիկյանը բարձր է գնահատել արվեստը, քանի որ լիապես իմացել է նրա ուժը։ Այդ էլ յույց տալիս նաև այն փաստը, որ իր ղեկուցումների ժամանակ, ինչպես և հրապարակախոսական հոգվածներում, նա հաճախ է դիմել գրական կերպարների, գրականությունից վերցրած թևավոր խոսքերի ու համեմատությունների օգնությամբ՝ իր միտքը առավել դիպուկ, ներգործոն և նպատակասլաց դարձնելու համար։ Բազմաթիվ օրինակներից նշենք միայն մեկը։ Յույց տալու համար, որ Նոր-Նախիջևանի հոգևոր հայրերը վիճում են ազգային հարցի մասին՝ առանց իրենց քաղաքից դուրս կատարվող գեղքերին տեղյակ լինելու, ուստի և փաստորեն վարում են անիմաստ ու սահմանափակ վեճ, Ալ. Մյասնիկյանը դիմում է Ն. Վ. Դոգուլի ստեղծագործությանը, որին հաճախ էր դիմում Լենինը։ Վոգուլի «Старосветские помещики», — գրում է Մյասնիկյանը, — ինչպես հայտնի է, ապրում էին միմիայն իրանց ներքին կյանքով։ Նրանց շրջապատող պատերից դուրս եռացող կյանքն ու նրա տարբերումը ոչ հետաքրքրել է նրանց, ոչ էլ հասել են նրանց ականջին։ Այդպես էլ Նոր-Նախիջևանցիները³։

Մենք չընդգրկեցինք այն բոլոր հարցերը, որ շոշափել է Ալ. Մյասնիկյանը գրականության ու կուլտուրայի վերաբերյալ իր հոգվածներում, աշխատությունների ու ղեկուցումների մեջ։ Սակայն, թվում է, ասածից էլ դժվար չէ եղրակացնել, որ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և ուրիշների հետ միասին, Ալ. Մյասնիկյանը հանդիսացել է հայ մարքսիստական գրականագիտության հիմնադիրներից մեկը։ Ըստ որում, եթե Շահումյանին ու Սպանդարյանին չվիճակվեց ապրել ու մասնակցել սովետական գրականության ու կուլտուրայի ստեղծման ու զարգացման համար մղվող պայքարին, ապա այդ բախտն ունեցավ Ալ. Մյասնիկյանը, թեև, դժբախտաբար, նա էլ երկար չապրեց սովետական իրավակարգում։ Սովետական Հայաստանում եղած իր կարճատև կյանքի ընթացքում իսկ Մյասնիկյանը, մյուս մարքսիստ-գրականագետների հետ միասին (Ա. Կարինյան, Ասք. Մոավյան և ուրիշներ), նեց սովետահայ գրականության զարգացման մի քանի կենսական խնդիրները, իր անունը կապելով ոչ միայն հայ ժողովրդի ազգային վերածննդի ու սոցիալիստական առաջին նվաճումների հետ, այլև սովետահայ արվեստի, գրականության, կուլտուրայի, գրականագիտության զարգացման պատմության հետ։ Ահա թե ինչու Լենինյան հին գվարդիայի պանծալի մարտիկ Ալեքսանդր Մյասնիկյանի պայծառ հիշատակը Հայաստանի աշխատավորները, այդ թվում գրականության ու կուլտուրայի բնագավառի աշխատողները, հատկապես պետք է սրբությամբ պահեն իրենց սրտում (Միկոյան)։

¹ Հնդկ. Թումանյանի «ստեղծագործությունների սոցիալական արժեքը», 1923։

² Տես «Մարտակոչ», № 37, 1923։

³ «Մշակ», № 274, 1913։